

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին

ՀՈՂՎԱԾ 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 19-րդ հոդվածի 8-րդ կետում՝

1. 8.5.3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<8.5.3.բակալավրի կրթական ծրագրի իրականացման համար, բացառությամբ բժշկական բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի, տարեկան	բազային տուրքի 300-ապատիկի չափով>>
---	------------------------------------

2. լրացնել նոր՝ 8.5.5 ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

<<8.5.5. մագիստրոսի կրթական ծրագրի իրականացման համար, բացառությամբ բժշկական բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի, տարեկան	բազային տուրքի 300-ապատիկի չափով:>>
---	-------------------------------------

ՀՈՂՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո:

ԱՍՓՈՓԱԹԵՐԹԻԿ

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին»,
 «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին»
 Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի
 վերաբերյալ արված առաջարկությունների

Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության և առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
1	2	3
ՀՀ կառավարություն	1. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի /այսուհետ՝ նախագիծ/ վերնագրում անհրաժեշտ է «լրացումներ» բառը փոխարինել «լրացում» բառով, քանի որ նախագծով կատարվում է մեկ լրացում: 2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 23-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումներ կատարելու համար կիրառվող վարչական տույժի տեսակ են հանդիսանում նախագգուշացումը և տուգանքը: Նկատի ունենալով սույն հոդվածի դրույթները՝ նախագծի 1-ին հոդվածում լրացվող 13.1 /այսուհետ՝ հոդված 13.1/ հոդվածի 1-ին և 3-րդ կետերում անհրաժեշտ է «օրենսդրությամբ սահմանված կարգով» բառերը փոխարինել «օրենքով սահմանված կարգով» բառերով: Հիշյալ առաջարկությունը բխում է նաև ՀՀ Սահմանադրության 83.5 հոդվածի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներից: Նախագծի 13.1 հոդվածի 5-րդ կետի 4-րդ ենթակետում անհրաժեշտ է «օգտագործման տալու» բառերը փոխարինել «օգտագործման հանձնելու» բառերով՝ նկատի ունենալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի պահանջները: 3. «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի /այսուհետ՝ նախագիծ/ վերնագրում անհրաժեշտ է	Ընդունվել է: Ընդունվել է:

